ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԳԷՈՐԳ ՄԷՀՐԱԲԵԱՆ ՈՐ Ի ՊԵՐՄ, ՌԴ

Հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Յարգարժան պրն. Մէհրաբեան, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի Առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով փեղեակ ենք ազգային ու եկեղեցական մեր կեանքում Ձեր մեծ վաստակին:

Այսօր առիթ ունենք Մեր բարձր գնահատանքը բերելու Ձեզ՝ մեր ժողովրդին ու հայրենի մեր երկրին մատուցած Ձեր արդիւնաւոր ծառայութիւնների եւ Արցախի զօրացման ու առաջընթացի գործում բերած Ձեր կարեւոր ներդրումի համար: Ձեր իրագործումներում Դուք Ձեր հայրենասէր ու ազգանուէր ոգին էք դրսեւորել՝ արժանանալով բազմաթիւ հայորդեաց երախտագէտ մաղթանքներին:

Գովարժան է նաեւ Ռուսաստանի հայ համայնքի կեանքից ներս ծաւալած Ձեր բազմարդիւն գործունէութիւնը: Տարիներ առաջ Դուք սիրով ստանձնեցիք Պերմի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու կառուցման հովանաւորութիւնը՝ հոգեւոր մեծ ուրախութիւն պարգեւելով Պերմում բնակեալ մեր ժողովրդի զաւակներին: Ազգային եւ եկեղեցական մեր կեանքում Ձեր վաստակը հարստացրեցիք նաեւ Մոսկուայի առաջնորդանիստ Եկեղեցու եւ համալիրի կառուցմանը բերած սրտաբուխ օժանդակութեամբ: Արդարեւ, դարիների Ձեր նուիրեալ գործունէութիւնը, որ Տիրոջ օրհնութեան ներքոյ արգասաւորուած է բարի արդիւնքներով, պատուաբեր է հայորդուդ համար եւ օրինակ մեր ժողովրդի զաւակներին՝ իրենց կեանքի ընթացքը բարեզարդելու ազգասիրութեամբ, հայրենասիրութեամբ ու եկեղեցասիրութեամբ իմաստաւորուած գործերով:

Բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում Ձեր գովելի ծառայութիւնը եւ սիրով ընդառաջ Թեմական Առաջնորդի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, որ Իր Հայրական օրհնութեան ներքոյ պարգեւի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին քաջառողջ արեւշատութիւն, զործոց մշտանորոգ յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ.
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 786